ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

НАІА-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-7

IAE PUBLICATION ▪ ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
YEREVAN 2025 ЕРЕВАН

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՒԱՆ 2025

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլնյուսի Եւրոպական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12–13-ին ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սփյուռքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սփյուռքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X
DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

I. ՀՀ–ՍՓՅՈՒՌՔ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռոբերտ Կարապետյան
Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաչիկ Վարդանյան
Մարիամ Հակոբյան
Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն-սփյուռք
գործակցության բաղադրիչ (ՀՀ–Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպէճեան
Մերձաւոր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերութիւններ.
արդի միտումներ, մարտահրաւէրներ և հնարաւորութիւններ 34

Գայանե Հակոբյան
Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում.
հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան
Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների
ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Ստեփան Զահարկնիչ
Արևելյան Եվրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը
և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի
ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան
Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները.
իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան
Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները,
այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան
«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների
համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինե Սվազլյան
Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Նելլի Խաչատրյան
Մարիամ Հարությունյան
Կրոնատածության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան
Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՁԱՆԱՁԱՆՔ

V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Կարեն Ասատրյան
Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ (19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան
«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Կասիա Արմենյան
Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսլականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Տորք Դալալյան
Լուսինե Հայրիյան
Մնահիտ Խեչոյան
Études arméniennes contemporaines, 2023, №15.
Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տագէսեան
Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ

Միլզան Բոնապեան
Հայագիտական ամառնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին. Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 230

V

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

DOI: 10.54503/2953-805X-2025.7-176

Կարեն Ասատրյան
ՀԱՊԹ

ՊՈԼՍԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԿԱՅԱԳՐԵՐ ԵՒ ՎԻՃԱԿԱՑՈՒՅՑՆԵՐ

(19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ)

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի (ՀԱՊԹ) փաստաթղթերի հավաքածուներում առկա են 19-րդ դ. վերջին քառորդից մինչև 20-րդ դ. առաջին քառորդն ընկած ժամանակաշրջանում Կ. Պոլսի հայ կրթական հիմնարկների՝ շրջանավարտներին ու աշակերտներին տված վկայագրեր և վիճակացույցներ[1], որոնք թանգարանին է նվիրաբերել Բարսեղ Միքայելի Թուղլաճյանը: Փաստաթղթերը հնարավորություն են ընձեռնում ծանոթանալու և հստակ պատկերացում կազմելու ժամանակաշրջանի կրթական համակարգին, դասավանդվող առարկաներին, գնահատման սանդղակներին, կրթաթոշակներին և որոշ դեպքերում՝ խրախուսական պարգևներին, որոնք աշակերտները ստանում էին բարձր առաջադիմության համար: Միաժամանակ, դրանք ներկայացնում են կրթադաստիարակչական այն միջավայրը, որում ձևավորվում ու զարգանում էր արևմտահայ միտքը, աշխարհայացքն ու մտածողությունը:

Ըստ Կ.Պոլսի թաղային վարժարանների «Վիճակացոյց»-ի 1907 թ. հունվարի 1-ի տվյալների՝ այնտեղ գործում էր թվով 42 վարժարան՝ 5517 աշակերտով[2]: Փաստաթուղթը կազմել է Կ. Պոլսի Ուսումնական խորհուրդը՝ պատրիարք Մաղաքիա եպիսկոպոսի հրամանով: Վիճակացույցն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է պոլսահայ դպրոցական կրթական համակարգը. ներկայացված են գործող 42 վարժարանները՝ իրենց նախակրթարաններով և տարրական աստիճանավորված դասարաններով: Երկուսը՝ Սարբեար Եէնի-Մահալէ թաղի Ս. Մեսրոպեան և Գանտիլլի թաղի Ս. Առաքելոց վարժարանները «*այս տարեշրջանին ևս առժամաբար փակ կը մնան*»:

---

1 Վիճակացույցը ցույց է տալիս տվյալ ուսումնական տարվա՝ աշակերտի առաջադիմությունը, իսկ վկայականն ու վկայագիրը հավաստում են դասընթացը կամ ուսումնական հիմնարկն ավարտելու փաստը:

2 ՀԱՊԹ 8668: Վիճակացույցի ցանկում ներառված են Կ.Պոլսում գործող բոլոր վարժարանները և թաղերը, ուր գտնվում են դրանք՝ Պէզճեան-Լուսաւորչեան (Գում-Գաբու), Ս. Մեսրոպեան (Կետիք-Փաշա), Պօղոս-Վառվառեան (Գում-Գաբուի դուրս), Ս. Առաքելոց-Հայկանուշեան (Եէնի-Գաբու), Ս. Սահակ-Նուն-Վարդուհեան (Սամաթիա), Ներսէսեան (Ալթը-Մերմեր), Խորէն-Վառվառեան (Նարլը-Գաբու), Ազգ. Ս. Փրկչեան Որբանոց (Գազլը-Չէշմէ),Տատեան(Մաքրիքէօյ),Գաբամաճեան(Այ-Սթէֆանոյ),Լևոն-Վարդանեան(Թօփ-Գաբու), Ս. Թադէոս-Բարթուղիմէոսեան (Սալմա-Թօմրուք), Պէզճեան (Էյուպ-Տէքթէրտար), Խորէնեան (Պալաթ), Ս. Ներսէսեան (Խասքէօյ), Գալֆայեան Որբանոց (Խասքէօյ), Ս. Մեսրոպեան (Գասըմ-Փաշա), Էսաեան (Բերա Թագսիմ), Նարեկեան (Կալաթա Սէրայ), Ս. Լուսաւորչեան (Բանկալթի), Արշակունեան (Տօլապ-Տէրէ), Ս. Մեսրոպեան (Ֆէրիքէօյ), Ս. Լուսաւորչեան (Ղալաթիա), Մաքրուհեան (Պէշիքթաշ), Ս. Թարգմանչաց-Հռիփսիմեանց (Օրթաքէօյ), Ս. Թարգմանչաց (Գուրու-Չէշմէ), Ս. Թադէոսեան (Ռումէշլի-Հիսար), Ս. Երից Մանկանց (Պոյաճըքէօյ), Մամիկոնեան (Եէնիքէօյ), Ս. Հռիփսիմեանց (Պէյոյիւքտէրէ), Ս. Մեսրոպեան (Սարբեար Եէնի-մահաշէ), Ս. Նիկողայոսեան (Պէյգօզ), Ս. Առաքելոց (Գանտիլլի), Ներսէս-Երմոնեան (Իւսկիւտար Իճատիյէ), Ս. Խաչ (Սելամիշէ), Ճեմարան-Վարժարան (Եէնի Մահալլե), Լուսաւորչեան (Գուզկունճուգ), Արամեան (Գատրքէօյ), Պէզճեան (Գարթալ), Ս. Ներսէսեան (Գընալը), Ս. Նշան (Ալէմ-Տաղ), Մաղաքեան (Էթ-Մէյտան):

Որոշ երեխաների համար կրթությունն անվճար է: Անվճար սովորողների թիվը չի կազմում որոշակի հարաբերությամբ հաստատված թիվ. կրթարանն այն որոշում է՝ համաձայն իր հնարավորությունների և աշակերտների ֆինանսական միջոցների: Ըստ վիճակագրության՝ 1907 թ. դրությամբ անվճար սովորողների թիվը 1741 է, որ կազմում է ընդհանուր սովորողների 32 %-ը:

Հետաքրքիր վիճակագրություն է ներկայացնում դասավանդող ուսուցչական կազմի սեռային բաժանումը. գրեթե բոլոր վարժարաններում ուսուցիչների թիվը գերազանցում է ուսուցչուհիների թվին: Արդյունքում՝ տղամարդ ուսուցիչների թիվը 163 է, կին ուսուցիչներինը՝ 120[3]:

Վիճակագրության «Ծանօթութիւնք» բաժինը կարևոր լրացումներ և մեկնաբանություններ է տալիս դպրոցների տարեկան գործունեության մասին: Մշտապես ուշադրության կենտրոնում են կեցության վատ պայմաններ ունեցող և ծնողազուրկ երեխաները: 6-րդ կետը տեղեկացնում է, որ դպրոցական 1904–1905 տարեշրջանից սկսած՝ Ազային Ս. Փրկչեան որբանոցները հիմնովին վերածվել են «Նախակրթարան-Արհեստարանի»: Տղաներին ուսուցանվող արհեստներն են՝ *կահագործութիւն*, *փայտի քանդակագործութիւն*, *ճախարակագործութիւն*, *դերձակութիւն*, *կոշկակարութիւն* և *թիթեղագործութիւն*: Աղջիկները սովորում են *կար*, *ձեռագիտութիւն*, *ասեղնագործութիւն*: Այսպիսով, աշակերտներն ավարտելիս *«...կը յաջողին շրջանաւարտ ըլլալ թէ՛ նախակրթական ուսմանց և թէ՛ արհեստից մէջ միանգամայն»:* 7-րդ կետը Գալֆայեան որբանոցում ապաստանող 70 որբ աղջնակների մասին է, որոնցից 5-ը զանազան արհեստներ են սովորում, 65-ը՝ «*մինչև կէսօր ուսմանց կը հետևին, ..., և յետ այնորիկ կը պարապին կար ու ձևի և ձեռարուեստի զանազան ճիւղերուն*»: Ըստ 10-րդ կետի՝ «*Իսկիւտար Ս. Խաչ Վարժարանի դպրոցական առարկաները և աղքատ տղոց գրական պէտքերը կը մատակարարուին Բարեսիրական Մասնախումբի կողմէ*»: Ըստ 13-րդ կետի՝ *«Թէև Մայրաքաղաքիս նախակրթարանի մէջ պաշտօնավարող երկսեռ կրթ. պաշտօնէից համագումարն 288 կը ներկայացուի, սակայն ասոնցմէ 25 հայազգի ուսուցիչք և ուսուցչուհիք մէկէ աւելի վարժարաններ այցելաբար կը դասախօսեն, որով կրթ. պաշտօնէից բուն թիւը կ'ըլլայ 263. ասոնց մէջ կը գտնուին նաև եկեղեցական դասէն 1 Եպիսկոպոս, 6 Վարդապետ, 4 քահանայ, և 4 օտարազգի ուսուցիչք և ուսուցչուհիք, որոնք նոյնպես այցելաբար կը դասախօսեն»:* Թեև ոչ բոլոր հիմնարկներն ունեին համապատասխան մասնագետներ, սակայն փորձ էր արվում դրանց բացը լրացնելու՝ դասախոսներին հավելյալ ժամեր տրամադրելով, որպեսզի աշակերտները ապահովվեին կրթությամբ, և դրան զուգահեռ՝ ստեղծվեր դասավանդման ճկուն համակարգ:

Տարեշրջանի ավարտական վիճակագրությունները ներկայացնում են տվյալ ուսումնական տարում աշակերտի առաջադիմությունը, ընդհանուր և միջին գնահատականները, կրթական հիմնարկում ուսումնասիրվող առարկաները, որոնք, որոշակի ընդհանրություններով հանդերձ, տարբեր են և ունեն իրենց յուրահատկությունները, քանի որ տվյալ ժամանակահատվածում չկար որևէ տեսչություն, որ պատասխանատու լիներ միասնական կրթական համակարգի չափորոշիչների մշակման և կառավարման համար, և այն գտնվում էր հիմնարկների կարողությունների ու հնարավորությունների շրջանակում:

Կրթարաններն ունեին սեփական գնահատման համակարգ՝ 5-ից մինչև 20 բալանոց գնահատման սանդղակ կամ գնահատում ըստ բնութագրման՝ «միջին, լավ, բավարար»: Ուսումնասիրված առարկայի գնահատականը որոշ վարժարաններում ձևավորվում էր տվյալ գիտության մաս կազմող բաժիններից. ինչպես, օրինակ՝ լեզուների գնահատականը գոյանում էր տվյալ լեզվի արտասանության, ուղղագրության, քերականության, թարգմանության, գրության ընդհանուր գնահատականից, *չափական գիտութիւն* առարկայինը՝ թվաբանություն, գրահաշիվ, երկրաչափություն, տոմարակալություն դասընթացներից:

3 Տես ՀԱՊԹ 8668:

Առանձին դասընթացներից ոչ բոլորն են ուսումնասիրվել. համենայն դեպս՝ կան դասընթացներ, որոնցից տվյալ ուսումնառության շրջանում չկան գնահատականներ: Սրանից կարելի է ենթադրել, որ տվյալ դասընթացի ուսումնասիրության համար չի եղել դասավանդող ուսուցիչ կամ համապատասխան բազա[4]:

Կարևոր ենք համարում նշել, որ գեղագրությունն ուսումնասիրվում էր գրեթե բոլոր դպրոցներում: Տարիների ընթացքում հայտնվում են նոր առարկաներ, ինչպես, օրինակ՝ *հոգեբանություն*, *առևտրական ուսում*, *փիեզերագրություն*, *օրենսգիտություն*, *տնտեսագիտություն*, որոնք ցուցիչ են՝ դպրոցական համակարգը շարունակաբար բարեփոխվելու և ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու:

ՀԱՊԹ հավաքածուներում պահվող մյուս վիճակացույցները ներկայացնում են Կ.Պոլսի Գում-Գաբուի Պէզճեան և Լուսաւորչեան վարժարանքը, Պէզազեան երկրորդական երկսեռ վարժարանը, Ֆէրի գյուղի Մէրամէթճեան ազգային վարժարանը, Գատըգիւղի Արամեան երկսեռ վարժարանը, Սկյուտարի Ս. Խաչ վարժարանքը և Օրիորդաց ճեմարանը, Իգնալը-կղզի թաղի Ազգային երկսեռ վարժարանը, Պէրպէրեան վարժարանը, Բանկալթիի Վարժարան Վիեննական Մխիթարեանցը: Փաստաթղթերը կնքված են կրթական հիմնարկների կնիքներով և (կամ) ստորագրված՝ հիմնարկների ներկայացուցիչների կողմից՝ հոգաբարձության ատենադպիր և ատենապետ, տնօրեն, տեսուչ, ավագ ուսուցիչ, ուսուցիչ: Քանի որ վիճակացույցներն ունեն քիչ ընդհանրություններ, սակայն հարուստ և *ինֆորմատիվ* բովանդակություն, կարևոր ենք համարում փաստաթղթերին անդրադառնալ առանձին:

Այս շարքում հատկապես առանձնանում է Գում-Գաբուի Պէզճեան և Լուսաւորչեան վարժարանքի՝ «Դ» դասարանի աշակերտ պ./արոն/ Գասպար Յովհաննէսեանին 1888–1889 ուստարվա համար տված վիճակացույցը, որն ունի թիվ 75 հերթական համար [նկ. 1][5]: Այն հավաստված է տեսուչի ստորագրությամբ: Վիճակացույցն ուշագրավ է գնահատման համակարգի տեսանկյունից: Աշակերտի գիտելիքները գնահատված են 20 բալանոց համակարգով, որն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է ձեռք բերված գիտելիքի պաշարը: «Նիշք և արժէք իւրեանց» դաշտում ներկայացված է 20 բալանոց սանդղակը՝ բաժանված յոթ մասի, յուրաքանչյուրում՝ երեք բալ, որոնք, համապատասխանաբար, ունեն «ամենատկար, տկարագոյն, տկար, միջակ, լաւ, լաւագոյն, քաջալավ» արժեքները: Ուշագրավ են նաև դասավանդվող առարկաները՝ *Քրիստոնէական վարդապետութիւն*, լեզուներ՝ *հայերէն*, *թուրքերէն*, *ֆրանսերէն*, *չափական գիտութիւնք*, *աշխարհագրութիւն*, *պատմութիւն*, *բնական գիտութիւնք կամ իրագիտութիւն*, *գծագրութիւն*: Դասավանդվող առարկաներն ունեն իրենց առանձին դասընթացները: Օրինակ՝ լեզուների գնահատականը գոյացել է արտասանության, ուղղագրության, քերականության, թարգմանության, գրության դասընթացներից, չափական գիտությունների գնահատականը՝ երկու դասընթացից, աշխարհագրության գնահատականը՝ մեկ դասընթացից: Պատմությունն ուսումնասիրվել է «Սրբազան», «Հայաստանեայց եկեղեցու», «Ազգային», «Օսմանյան», «Ժամանակակից» բաժիններով, և գնահատականը գոյացել է բոլոր դասընթացների հանրագումարից: Չափազանց հետաքրքիր է «Վարք կամ պարտաճանաչումն» բաժինը, որ ներկայացնում է աշակերտի ընդհանուր վարքն ու կարգապահությունը և ունի *եկեղեցասիրութիւն*, *դպրոցասիրութիւն*, *աշակերտասիրութիւն*, *կարգապահութիւն*, *բարեկրթութիւն* նորմերը:

Վիճակացույցի «Վարք կամ պարտաճանաչումն» բաժնի բարեկրթություն ենթաբաժինը ներառում է՝ «*սիրե ծնողքը, ընկերը, ազգը, ևն. վայելուչ կենցաղավարիլ ևն.*»: Հետաքրքիր է

4 Հնարավոր է նաև, որ ավարտական փաստաթղթի ձևաթուղթը ներառել է տվյալ կրթական հաստատության ուսումնական ծրագրի բոլոր առարկաները և տվյալ տարեշրջանում այն ըստ ծրագրի չի ուսումնասիրվել:

5 ՀԱՊԹ 8647:

այն փաստը, որ ծնողա-ընկերա-ազգասիրությունն է առողջ անհատ ձևավորելու կարևոր գործոնը: Եւ անհատի դաստիարակության մասին խոսելիս՝ այս երեք ինստիտուտները միշտ միասին են հանդես գալիս:

Վիճակացույցի բաժիններից առաջին երկուսը՝ *Եկեղեցասիրութիւն* և *Դպրոցասիրութիւն*, գնահատված են, և հետաքրքիր է, որ գնահատականը ներկայացվում է աշակերտի ունեցած բացակայություններով: Աշակերտ Գ. Յովհաննիսեանը եկեղեցասիրությունից ունի «միջակ», դպրոցասիրությունից՝ «չունի» գրությունները, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ բացակայություն չի ունեցել դպրոցական դասընթացից և մի քանի բացակայություն է ունեցել, ըստ ուսումնական ծրագրի, եկեղեցի հաճախելուց: Ուշադրության արժանի է նաև բարեկրթության բաժինը, որը բացատրվում է որպես ծնողասիրություն, ընկերասիրություն, ազգասիրություն, վայելուչ կենցաղավարություն ևն: Վերջին երեք նորմերը գնահատականներ չունեն, սակայն դատելով Գասպարի հաջողություններից և մրցանակակիր լինելուց՝ կարելի է ենթադրել, որ դրանք նույնպես լավը կլինեին: Վիճակացույցի ձևաթուղթը տպագրվել է «Գ. Պաղտատլեան (Արամեան)» տպագրատանը:

Դասավանդված առարկաների նմանատիպ ցանկ ունի Գատըգյուղ թաղի Արամյան երկսեռ վարժարանի՝ 1915–1916 ուստարվա համար օրիորդ Ատրինէ Մանասեանին տված վիճակացույցը[6]: Այն կնքված է վարժարանի տեսչության կլոր կնիքով, գնահատված է 10 բալանոց համակարգով, և յուրաքանչյուր նիշ ունի իր արժեքը, ինչն ավելորդ չենք համարում ներկայացնել՝ «*քաջալաւ, քաջ, լաւ, գոհացուցիչ, միջակ, փկար, փկարագոյն, ծոյլ, շատ ծոյլ, յոռի, ոչինչ*»: Վիճակացույցը նախորդից տարբերվում է նրանով, որ աշակերտի առաջադիմությունը ներկայացնում է «Կարգ առաջնութեան» դաշտում: Օրիորդ Ատրինէ Մանասեանը 17-րդ հերթական համարն է «իր կարգի ուսանողաց մեջ», ունի ընդհանուր 100 բալ, միջին գնահատականն է՝ 10, և ընդհանուր վիճակը գնահատվել է «յոյժ գոհացուցիչ»:

Կարևոր է այն հանգամանքը, որ կրթական հիմնարկը քաջալերում էր աշակերտի ցուցաբերած առաջադիմությունը: Էսաեան ազգ. երկսեռ վարժարանի երկրորդ դասարանի աշակերտուհի օրիորդ Վ.-ն (ազգանունը՝ դժվարընթեռնելի) 1922–1923 ուստարվա համար ստացել է մրցանակ՝ «ոսկեզօծ գիրք մը»: Օրիորդ Վ.-ի բարձր գնահատականներն ակներև են, ինչը միջինացված ամփոփվել է «միջին վարուց»՝ 9.5 և «ընդհ. աշխատութեաց»՝ 8.4 բաժիններում:

Վիճակացույցներից յոթը ներկայացնում են աշակերտների առաջադիմությունը և նրանց հերթագայությունը դասարանում՝ ըստ հավաքած միավորների[7]:

Ֆէրի գիւղ թաղի Մէրամէթճեան ազգ/ային/ վարժարանի՝ Յակոբիկ Ազարեանին 1922–1923 տարեշրջանի համար տված վիճակացույցի համաձայն՝ 9.2 միջին գնահատականով Յակոբիկը 40 աշակերտի մեջ 8-րդն է [նկ. 2][8]: Թաղի մեկ այլ՝ Պէզազեան երկրորդական երկսեռ վարժարանի սան Նուարդ Ռաֆայէլեանը, համաձայն 1920–1921 ուստարվա վիճակացույցի[9], 9 բալ միջին գնահատականով 13 աշակերտի մեջ Ջ. (6-րդ)-ն է:

Օրիորդ Պ. Շնորհքեանը Իգնալը-կղզի թաղի Ազգային երկսեռ վարժարանի տվյալ տարեշրջանն ավարտել է 9.4 միջին գնահատականով և 9 աշակերտի մեջ 1-ինն է: Վիճակացույցը[10] տրվել է 1916թ. հուլիսի 1-ին, ըստ որի՝ հասկանալի է, որ օրիորդ Շնորհքեանն այն ստացել է 1915–1916 տարեշրջանի համար:

Սկյուտարի Ս. Խաչ վարժարանի 1899թ. հուլիսի 1-ի «տարեկան գրաւոր հարցաքննութեան» արդյունքում օրիորդ Աղաւնի Մանասեանը «հինգերորդ կարգի» ուսանող է: Այս

6 ՀԱՊԹ 8650:
7 ՀԱՊԹ ՓԳՕ 1794:
8 ՀԱՊԹ 8649:
9 ՀԱՊԹ 8648:
10 ՀԱՊԹ 8646/2:

վիճակացույցը[11] գնահատված է 5 բալային համակարգով, սակայն գնահատականներն ունեն կոտորակային բաժանումներ: Հինգ միավորից յուրաքանչյուրն, իր հերթին, ունի չորսական քառորդ միավոր, ինչն ընդհանուր կազմում է 20 միավորանոց համակարգ: Օրիորդ Աղավնին պատմությունից ունի «1/2», ֆրանսերենից՝ «2» միավոր: Գնահատականները ցույց են տալիս, որ քննություններն անցկացվել են բավական բծախնդրորեն և արդարացի, միավորներն են՝ «4 1/4», «3 2/4»:

Բանկալթիի Վիեննական Մխիթարյան վարժարանի եռալեզու վկայագիրը[12]՝ տրված 6-րդ դասարանցի Ջանդրջեան Սինանին (Jandrjian Sinan) 1928 թ., 9.58 միավորով նրան դարձնում է 29 աշակերտի մեջ 2-րդը:

Իր ձևով մյուսներից տարբերվում է Պէրպէրեան վարժարանի սան Սիսակ Սմբատեանին 1909–1910 ուստարվա համար տրված վիճակացույցը[13]: Այն 16 թերթից կազմված գրքույկ է՝ «Վիճակացոյց-տետր», որ կազմված է երկու մասից: 3–10-րդ էջերում ներկայացված է վարժարանի Կանոնագիրը: Մյուս էջերում յուրաքանչյուր ամսվա, կիսամյակի և տարեկան առաջադիմությունը ամփոփող ձևաթղթերն են: Լրացված է միայն տարեկանը՝ «Արդիւնացոյց ... տարւոյ» (վերջին երկու թերթը), որի համաձայն՝ Սիսակ Սմբատեանի քննությունների միջին գնահատականը «4.6» միավոր է, կարգը փոխված է «պայմանական», մրցանակ չունի: Գնահատականները ներկայացված են կոտորակներով, բարձրագույն միավորը 6 է:

Ուսումնական տարեշրջանի ավարտական փաստաթուղթ են ստացել նաև մանկապարտեզի սանները: Թեև թանգարանի հավաքածուում առկա միակ վկայագիրը[14] տրվել է 1929 թ., սակայն ենթադրելի է, որ մանկապարտեզի վկայագրերը նույնպիսի բովանդակություն են ունեցել: Փաստաթուղթը հավաստում է, որ Կ. Պոլսի Միջագիւղի Ս. Հռիփսիմեանց ազգային մանկապարտէզի սան պարոն Խաչիկ Գարապողոսեանն արժանացել է սույն վկայագրին, քանի որ նա «ամբողջովին և յաջողապէս» լրացրել է մանկապարտեզի տվյալ տարեշրջանը: Վկայագիրն ունի վարժարանի տնօրենի ստորագրությունը, կնքված է դպրոցի կնիքով:

Ավարտական փաստաթղթերը՝ վկայագրերը կամ վկայականներն, ունեն առավել գեղեցիկ ձևավորում, լինում են նաև երկլեզու, եռալեզու: Այս դեպքում ձևաթղթերն առավել մեծ են, ունեն փաստաթուղթը եզերող զարդարուն շրջանակներ: Բովանդակության մեջ նշվում են փաստաթուղթը ստացող անձի ծննդյան վայրը և ամսաթիվը, հանձնաժողովը, որի կողմից այն տրվել է, և կարող է վավերացվել տվյալ հիմնարկի հոգաբարձուների խորհրդի կամ ազգային կենտրոնական վարչության կողմից:

Ազգային Մեսրոպյան վարժարանի՝ 1899 թ. ծնված Մարիամ Պաքրճեանին տված «Տարրական Նախակրթարանի Շրջանաւարտի» վկայագրում հղում է արված նաև Ազգային կենտրոնական վարչության վավերացրած «Նախնական կրթության կազմական կանոնագրի ԻԸ. (29-րդ) հոդվածին[15]: Փաստաթուղթը հավաստված է վարժարանի հոգաբարձության ձվաձև կնիքով:

Պէզազեան երկրորդական երկսեռ վարժարանի՝ Կ.Պոլսում 1899 թ. ծնված Զուարթ Սեմերճեանին 1916 թ. տված «Բարձրագոյն ուսմանց» վկայագիրը եռալեզու է՝ հայերեն, ֆրանսերեն և արաբատառ օսմաներեն: Ըստ վկայագրի՝ Զ. Սեմերճեանն անցել է վարժարանի ութամյա կրթությունը և «հրապարակային քննութիւնները յաջողապէս անցուցելով» արժանացել վկայագրին [նկ. 3][16]: Փաստաթղթի երեք հատվածներն էլ ունեն վարժարանի

11 ՀԱՊԹ 8651:
12 ՀԱՊԹ 8658:
13 ՀԱՊԹ 8825:
14 ՀԱՊԹ 8826:
15 ՀԱՊԹ 8661:
16 ՀԱՊԹ 8653:

կնիքը: Վկայագրի ձևաթուղթն ունի գեղեցիկ հարդարանք՝ բուսանախշ շրջանակի վերին նիստի կենտրոնում «ՊՎ»՝ միահյուսված անվանատառերով:

Իր հարուստ ձևավորմամբ աչքի է ընկնում Յ. Թ. Հինդլեան – Գ. Ա. Մալաթեան Նոր Դպրոց վարժարանի սան Խորէն Մարտիկեանին տրված եռալեզու վկայականը[17]: «Երկրորդական ուսմանց» վկայականը Խ. Մարտիկեանը ստանում է «պսակաւորի համարժէք» աստիճան, որ համապատասխանում է բակալավրի աստիճանին (ֆրանսերեն հատվածում՝ «Bachelier»):

Մյուս երկու վկայականներն առավել ամբողջական են ներկայացնում պոլսահայ կրթական համակարգը, քանի որ երկուսն էլ ստացել է միևնույն անձը. դրանք մեկը մյուսի շարունակությունն են: Էսաեան վարժարանի սան օրիորդ Սիրանոյշ Մարկոսեանն ավարտել է վարժարանի նախակրթարանը և «1921–1922 տարեշրջանի աւարտական քննութիւնները յաջողութեամբ» հանձնելով՝ արժանացել «Տարրական Նախակրթութեան Շրջանաւարտի» վկայականի [նկ. 4][18]: Տրման ամսաթիվն է՝ 1923 թ. հունվարի 1-ը, հաստատված է Ուսումնական Խորհրդի ատենադպրի, ատենապետի և Տեղ/ապահ/ Պատրիարք Հայոցի ստորագրություններով ու վավերացված է Խորհրդի և Պատրիարքարանի կլոր կնիքներով: Ապա Ս. Մարկոսեանն ավարտել է Էսաեան երկս/եռ/ Վարժարանի «Երկրորդական բաժնի ընթացքը» և ստացել 1925 թ. հունիսի 29-ով թվագրվող վկայագիրը [նկ. 5][19]: Փաստաթուղթը երկլեզու է՝ հայերեն և արաբատառ օսմաներեն, և այս հատվածում ունի կնիքով հաստատված լուսանկար: Սիրանույշ Մարկոյանն ավարտելուց հետո շարունակել է պաշտոնավարել վարժարանում, ինչի մասին տեղեկանում ենք Թ. Ազատյանի «Պատմութիւն Էսաեան Վարժարանի» աշխատությունից. 1925–1926 թթ. վարժարանում նոր պաշտոնավարած անձանց շարքում է նաև օրիորդ Սիրանույշ Մարկոյանը[20]:

Հիմք ունենալով ՀԱՊԹ հավաքածուում առկա՝ կրթական հիմնարկների հանձնած վկայականները՝ տեսնում ենք, որ դասավանդվող առարկաները տարիների ընթացքում փոփոխվել են, ինչը վկայում է կրթության որակի և կրթական համակարգի շարունակական բարելավման ու զարգացման մասին: Հիմնարար առարկաները՝ լեզուներ (հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն), բնական և հասարակական գիտությունները, պահպանվում են գրեթե բոլոր հիմնարկներում: Ուշադրության է արժանացել աշակերտի վարքը կամ պարտաճանաչությունը. շատ հաճախ այդ առարկան ցանկում ամենաառաջինն է: Տարիների ընթացքում ավելացել են նոր առարկաներ, որոնք այսօր էլ զարմացնում են իրենց արդիականությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏԵԱՆ 1945
Ազատեան Թ.Մ., Պատմութիւն Էսաեան վարժարանի (յիսնամեայ յիշատակարան), տպագրութիւն Վ. Տէր-Ներսէսեան և որդիք (Կիւզէլիշ Պասըմէվի), Իսթանպուլ, 1945, 174 էջ:

17 ՀԱՊԹ 8824:
18 ՀԱՊԹ 8643/1:
19 ՀԱՊԹ 8643/2:
20 Ազատեան 1945, 75:

Karen S. Asatryan
National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle «Sardarapat»

CERTIFICATES OF THE EDUCATIONAL SYSTEM OF THE ARMENIANS OF CONSTANTINOPLE

(Late 19th – Early 20th Centuries)

The collection of documents of the Museum of Armenian Ethnography owns valuable papers donated by Barsegh Tughlachyan (1933–2016, Istanbul, Armenian philologist, lexicographer: in Turkish press and literature known as Pars Tukhlaci). Among them are certificates issued to graduates and students of Armenian educational institutions, dating from the fourth quarter of the 19th to the first quarter of the 20th centuries. They provide an exceptional opportunity to become familiar with the educational system of this period, subjects, grading scales, scholarships, and in some cases encouraging awards.

Карен Сашаевич Асатрян
Национальный музей этнографии армян
и истории освободительной борьбы «Сардарапат»

АТТЕСТАТЫ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ КОНСТАНТИНОПОЛЬСКИХ АРМЯН

(конец 19-го – начало 20-го вв.)

Колекция документов Музея армянской этногряфии содержит ценные бумаги, которые подарил музею Барсег Микаелович Тухладжян (1933–2016гг., Стамбул, армянский филолог, лексикограф: в турецкой прессе и литературе известен под литературным псевдонимом Парс Тухлачи), в числе которых – аттестаты, выданные выпускникам и ученикам армянскими образовательными учреждениямии, статистические данные, охватывающие период с четвертой четверти 19-го века по первую четверть 20-го века, которые предоставляют исключительную возможность ознакомиться с образовательной системой данного периода, преподаваемыми предметами, оценочными шкалами, стипендиями, а в некоторых случаях и поощрительными наградами.

Ներկայացվել է՝ 18.02.2025,
գրախոսվել է՝ 20.06.2025,
ընդունվել է՝ 10.07.2025:

Կարեն Ասատրյան

ՊՈԼՍԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԿԱՅԱԳՐԵՐ ԵՒ ՎԻՃԱԿԱՑՈՒՅՑՆԵՐ (19-րդ դարավերջ - 20-րդ դարասկիզբ)



ՊՕՂՍԱՀԱՅ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐՉԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՔ

Մայր Եկեղեցւոյ Գում-Գափուլի

ՎԻՃԱԿԱՑՈՅՑ

Աշակերտ 17 Դասարանի

Ազ. Գասպար Յակոբեանէ տրուած Ա. 75

1888-1889

ՎԱՐՔ ԿԱՄ ՊԱՐՏԱՎԱՆԱՁՈՒՄՆ

Եկեղեցասիրութիւն, (բացակայ)

Դպրոցասիրութիւն, (բացակայ)

Աշխատասիրութիւն

Կարգապահութիւն

Բարեկրթութիւն, (սիրեցողը, ընկերը, ազգը եւն. վայելուչ կենցաղավարիլ եւն.)

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ 18

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Արտասանութիւն

Ուղղագրութիւն

Գրականութիւն

Թարգմանութիւն

Գրութիւն

} 19

ԹՈՒՐՔԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Արտասանութիւն

Ուղղագրութիւն

Գրականութիւն

Թարգմանութիւն

Գրութիւն

} 20

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Արտասանութիւն

Ուղղագրութիւն

Գրականութիւն

Թարգմանութիւն

Գրութիւն

} 16

ԶԱՓԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

Թուագիտութիւն

Տարերք Գրաճառուի

» Երկրաչափութեան

Տոմարագիտութիւն

} 20

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Բնական

Քաղաքական

Ուսումնական

} 20

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մեծագան

Հայասանեայց եկեղեցւոյ

Ազգային

Օսմանեան

Ժամանակակից

} 19

ԲՆԱԿ. ԳԻՏՈՒԹԻՒՆՔ ԿԱՄ ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Տարերք Հանքաբանութեան

» Բուսաբանութեան

» Կենդանաբանութեան

» Բնագիտութեան

» Բնալուծութեան

} 18

ՀԱՄԱՌՕՏ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳԵՍԱԳՐՈՒԹԻՒՆ 18

ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ 17

ԶՍՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

ԴԱՇՆԱԿ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ՋԵՌԱՐՈՒԵՍՏ

ՆԻՇԵՐ ԵՒ ԱՐՅԱՆՔ ԻՒՐԵՆՑ

Ի վաւերացումն կնքեալք

0 1 2 Ամենասուրբ

3 4 5 Տկարազոյն

6 7 8 Տկար

9 10 11 Միջակ

12 13 14 Լաւ

15 16 17 Լաւագոյն

18 19 20 Գերազանց

Ի հաստատութիւն ստորագրեալք

ՏԵՍՈՒՉ

Ստորագրութիւն Գ. Պարսեղեանց (Անուանեալ)

Karbar Olamas Tuz 22 24 26

Նկար 1. *ՀԱՊԹ 8647*



ՄԷՐԱՄԷԹՋԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ
ՖԷՐԻ-ԳԻՒՂ

ՎԻՃԱԿԱՑՈՅՑ

Սարգիս ՔՆՆՈՒՔԵԱՆՑ
1922–1923 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Անուն ..... Յովսեփ Սարգիս
Աշակերտ ..... Ա դասընթացքի
Վարք 10
Մաքրութիւն 10

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԹԻՒ 10

Կրօնք	10	Աշխարհագրութիւն	10
Հայերէն	9.5	Իրազիտութիւն	10
Անգլիերէն լեզու		Բնագիտութիւն	
Ֆրանսերէն լեզու	10	Գեղագրութիւն	8.5
Թուաբանութիւն	9.5	Դծագրութիւն	4
Երկրաչափութիւն		Ձեռագործ	
Պատմութիւն Ազգ.	10		

Միջին Թիւ 9.2

Դասակարգութիւն 40 աշակերտաց մէջ 8 տ
Պիտի ընդունուի Սարգիս կարգին մէջ:
Պիտի վերաքննուի
Մանօթութիւն

Ազգ Ուսուցչութի

29 Յունվար 1923

ՖԷՐԻ-ԳԻՒՂ

Տպգր. Գեղէոն Պետրոսեան

Նկար 2. *ՀԱՊԹ 8649*

Նկար 3. *ՀԱՊԹ 8653*

Նկար 4. *ՀԱՊԹ 8643-1*

Նկար 5. *ՀԱՊԹ 8643-2*

Նկար 6

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա
Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ /
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Զախարկևիչ Ստեփան Արթուրի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Եվրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճէպէճեան Հրայր Վահէի
աստուածաբանության դոկտոր
Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսեսի
սոցիալական գիտությունների թեկնածու
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն
gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող
poghosyansvetlana26@aspu.am

Սվազլյան Վերժինե Գառնիկի
բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ
vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաձին Վարդանի
պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ
vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan
On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan
Mariam Hakobyan
The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian
Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan
Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan
Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich
Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan
Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan
Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan
Suzanna Barseghyan
Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan
The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian
The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian
Mariam Harutyunyan
Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan
Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan
Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan
The Role of Weekly Newsletter "Hayastan" in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian
Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan
Lusine Hayriyan
Anahit Khechoyan
Études arméniennes contemporaines, 2023, № 15 :
La presse de langue arméniennes en France et la création d'un espace transnational 200

Antranik Dakessian
Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan
The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян
О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян
Мариам Акопян
Политика идентичности как составляющая
сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебеджян
Отношения между армянскими общинами Ближнего Востока
и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян
Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре:
точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян
Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич
Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее
исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян
Социально-культурные особенности армянской общины Варны:
ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян
Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше,
результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян
Сюзанна Барсегян
Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян
Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры:
пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян
Уровень сохранения армянства у американских армян
по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян
Мариам Арутюнян
Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян
Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян
Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян
Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян
Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян
Лусине Айриян
Анаит Хечоян
Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян
Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырналян
40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ 221

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 230

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան

ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատուրյան

տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան

ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա)։

ՀԱԻԱ 7